

## ՔՈՂԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԱՆՏ.ՈՄԱԾԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Մ. Ո. ԵՐԻԱԶԱՐՅԱՆ


Հայաստանի Հանրապետության տնտեսության ազատականացմամբ 1990-1991 թթ. ստեղծվեցին աշխատանքի շուկայի ձևավորման տնտեսական, իսկ 1992 թ.-ից՝ զբաղվածության մասին ՀՀ Գերագույն Խորհրդի ընդունած առաջին օրենքով նաև իրավական հիմքերը: Ըստ այդմ, սկսած 1992 թ. -ից հանրապետության պաշտոնական վիճակագրությունը հնարավորություն ստացավ ամրագրել աշխատաշուկայում առաջարկի ու պահանջարկի դինամիկան, կատարել գործազուրկների հաշվառում ըստ մի քանի բնութագրիչների (սեռ, տարիք, մասնագիտություն, աշխատանքային փորձառություն և այլն), գնահատել շուկայական պայմաններում աշխատուժի շարժի ուղղություններն ու մասշտաբները:

1992 թ. զբաղվածության մասին ընդունած օրենքով չզբաղվածների (այդ թվում նաև գործազուրկների) գրանցման ընթացակարգի ամրագրմամբ հանրապետության զբաղվածության ծառայություններում տարեվերջին արդեն գրանցվել էր ավելի քան 64 հազար չզբաղված բնակչություն:

1992 թ. պաշտոնական վիճակագրությունը «դե-յուրե» ամրագրել է նախորդ տարվա համեմատությամբ զբաղվածության կրճատում մոտավորապես 100 հազ. մարդով (կամ 5.6%), իսկ 1998 թ. սկզբին աշխատանքային գործունեությամբ չզբաղվող և հանրապետության զբաղվածության ծառայություններում հաշվառման կանգնած քաղաքացիների թիվը կազմել է 180-190 հազ. մարդ, որը ըստ էության հավասար էր տնտեսապես ակտիվ բնակչության 11-12% -ին: Վերջապես, 2000 թ. ապրիլի 1-ի դրությամբ հիշյալ ծառայություններում հաշվառման կանգնած 209.7 հազ. մարդուց գործազուրկի կարգավիճակ ստացել է 182.6 հազ. մարդ կամ տնտեսապես ակտիվ բնակչության 14.3%-ը: ՀՀ աշխատաշուկայում 1985-2000 թթ. ընդհանուր զբաղվածության դինամիկան գրաֆիկի ձևով ներկայացնելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

*Գրաֆիկ 1*

**1985-2000 (01.04) թթ. ընդհանուր զբաղվածության դինամիկան (հազար մարդ)<sup>1</sup>**




\* Վերը բերված թվերից պարզ երևում է, որ 1998-2000 թթ. Հայաստանում տեղի է ունեցել տնտեսապես ակտիվ բնակչության նվազում մոտավորապես 332 հազար մարդով կամ 20.62 %-ով:

<sup>1</sup> Տվյալները վերցրած են ՀՀ վիճակագրության ազգային ծառայության 1985-

Գրաֆիկից պարզ երևում է, որ սկսած 1992 թ.-ից հանրապետության տրնտեսության մեջ տեղի է ունեցել ընդհանուր զբաղվածության սիստեմատիկ անկում, ընդամենը, աշխատաշուկայում նկատվող գլոբալ միտումները գործնականում քիչ են կորելացվում տնտեսական գործընթացների ընդհանուր ուղղվածության հետ: Հատկանշանակ է, որ համախառն ներքին արդյունքի դինամիկան ունեցել է բոլորովին այլ նկարագիր, որը հստակորեն երևում է գրաֆիկ 2-ից:

Գրաֆիկ 2

1988-1999 թթ.-ի ՀՆԱ-ի ինդեքսները (Ix GDP)<sup>2</sup>



Վերը նշված գրաֆիկներում դրսևորված միտումների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս աշխատաշուկայում տեղի ունեցած փոփոխությունների հիման վրա բացահայտելու վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման հետևյալ առանձնահատկությունները.

- «դե-յուրե» ընդհանուր զբաղվածության բարձր մակարդակը պահպանվել է ավելի երկար ժամանակ (ներառյալ մինչև 1991 թ.), քան ՀՆԱ-ի աճման դրական տեմպը (մինչև 1989 թ.): Հաջորդ տարիներին (1990 - 1993 թթ.) տեղի ունեցած զբաղվածության կրճատումն անհամամասնական է տնտեսական ճգնաժամի խորությամբ: Դա բացատրվում է ինչպես համապատասխան իրավական դաշտի, այնպես էլ տնտեսավորող սուբյեկտների կողմից ավելցուկային աշխատուժի կրճատման տնտեսական շահագրգռվածության բացակայությամբ:

- ՀՆԱ -ի թեկուզև աննշան աճը 1994-1997 թթ. ուղեկցվել է զբաղվածության տարեցտարի ավելացող անկմամբ, որը վկայում է զբաղվածության ոլորտում իրականացած կառուցվածքային նշանակալից փոփոխության մասին:

Զբաղվածությունը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված է վերջին տարիներին ձևավորված առանձնահատկություններով: Ներկայումս աշխատանք փնտրողների աճն ուղեկցվում է ազատ աշխատատեղերի նվազմամբ: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է ոչ միայն մասնագիտական որակական աստիճանի չհամապատասխանող աշխատատեղերի, այլև ընդհանրապես ազատ աշխատատեղերի բացակայությանը: Վերջին ժամանակներում հաճախակի են դարձել աշխատավարձի ուռացումները և չվճարումները: Զեղնարկություններում ցածր վարձատրության, աշխատանքային վատ պայմանների, պարապորդների, ձեռնարկությունների աղմինիստրացիայի նախաձեռնությամբ իրականացվող կրճատ աշխատաժամանակի և հարկադիր արձակուրդների ռեժիմների համատարած կիրառումը վկայում է աշխատուժի ավելցուկի մասին:

1999 թթ. տարեկան զեկույցներից և 2000 թ. հունվար-մարտ եռամսյա զեկույցից:

<sup>2</sup> Տվյալները վերցրած են ՀՀ վիճակագրության ազգային ծառայության 1988-1999 թթ. տարեկան զեկույցներից:

«Ավելցուկային աշխատուժը» տեսական վերլուծության տերմին է, որով նշում են աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի տարբերությունը: «Ավելցուկային աշխատուժը» ընդհանուր ըմբռման մեջ առարկայանում է տրնտեսական համակարգի կացությունը (ձեռնարկության, ճյուղի, շրջանի, երկրի), երբ աշխատանքի տվյալ ծավալը այլ հավասար պայմաններում կարող է կատարվել փոքրաթիվ աշխատողներով:

Եթե զարգացած երկրներում ավելցուկային աշխատուժի երևան գալու գրիխավոր պատճառները տեխնիկական, տեխնոլոգիական և կազմակերպչական փոփոխություններն են, արդյունավետ աշխատավարձի քաղաքականությունը<sup>1</sup>, այսպես Հայաստանի Հանրապետությունում ավելցուկային աշխատուժի առկայությունը պայմանավորված է քաղաքական ու տնտեսական համակարգի ընդհանուր բացասական իրավիճակով, տնտեսության մեջ կառուցվածքային վերակառուցման իրականացմամբ:

Շուկայական տնտեսության մեջ արդյունավետության մեխանիզմը ահագանգում է ավելցուկային աշխատուժի մասին և այդժամ, արտադրական համակարգի կամքով պայմանավորված, ավելցուկը կարող է դուրս մղվել նրա սահմաններից և ներլցվել բացահայտ գործազրկության բնագավառ, կամ էլ կարող է արհեստականորեն պահպանվել և մնալ արտադրական համակարգի ներսում՝ ստանալով քողարկված գործազրկության ձև:

Բանի որ ներկա հողվածում նպատակ ունենք բացահայտելու ՀՀ քողարկված գործազրկության ծավալն ու պատճառները, ըստ այդմ դիտարկենք անցումային շրջանում մեր երկրի աշխատաշուկայում տեղի ունեցած քաղաքական ու որակական փոփոխությունները:

Անցման շրջանում շատ ձեռնարկություններ, կորցնելով ինչպես հումքի ձեռքբերման, այնպես էլ արտադրված ապրանքների իրացման շուկաները, կանգնեցին տնտեսապես դժվար կացության առջև և մասնակիորեն կրճատեցին կամ ամբողջովին դադարեցրեցին իրենց գործունեությունը:

Այս պայմաններում նշված ձեռնարկությունների աշխատողները, որոնք դեռևս պատրաստ չէին և չէին բավարարում շուկայի պահանջները, հայտնվեցին փաստացի անգործության վիճակում: Բանն այն է, որ մի կողմից նրանք համարվում էին տվյալ ձեռնարկության աշխատողներ, իսկ մյուս կողմից չէին աշխատում և չուներին վաստակ: Այդ կարգի աշխատողներին տրվում էր վարչական հարկադիր արձակուրդ՝ անվճար կամ չնչին վճարով: Վերջիններս, մի կողմից հույս ունենալով, որ ձեռնարկությունը նորից կվերսկսի իր գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ գերի մնալով սովորույթին, նախկին աշխարհայացքին ու իրենց ունեցած մասնագիտական որակավորմանը, վերջապես շուկայից վախենալու և նոր աշխատանք որոնելու ճանապարհին կրած անհաջողությունների և համանման այլ պատճառներով գամվում էին իրենց ձեռնարկություններին, հաշվառման չէին կանգնում զբաղվածության ծառայություններում, ըստ էության մեծացնում էին այսպես կոչված քողարկված գործազուրկների զանգվածը: Ասենք նաև, որ քողարկված գործազրկությունը որոշ իմաստով ձեռնտու է հենց տնտեսական ծանր կացության մեջ հայտնված ձեռնարկություններին, որովհետև չունենալով ֆինանսական համապատասխան միջոցներ՝ հաստիքների կրճատման դեպքում չեն կարող վճարել նպաստները:

Փաստորեն, քողարկված գործազուրկներն այն քաղաքացիներն են, ովքեր, իրականում լինելով անգործ, չեն աշխատում, չեն ստանում աշխատավարձ, բայց ձևականորեն համարվելով աշխատավորական որևէ կոլեկտիվի անդամ՝ գտնվում են հարկադիր արձակուրդում, հարկադիր պարապորդում կամ հաստիքների կրճատման տակ և հաշվառման չեն վերցված գործազրկության ծառայությունների կողմից:

<sup>1</sup> Տե՛ս *Дж. Сакс, Д. Лоррен, Макроэкономика, М., 1996., էջ 543-544.*

Հարկ է նշել, որ ՀՀ աշխատաշուկան ունի մի շատ կարևոր առանձնահատկություն. այստեղ այն պայմանավորված է տնտեսության միկրոմակարդակով, այսինքն՝ ձեռնարկությունների մակարդակում աշխատուժի օգտագործման առանձնահատկություններով: Ըստ այդմ, ուսումնասիրելով ձեռնարկություններում աշխատուժի օգտագործման վիճակը, կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական առանձնահատկությունները<sup>4</sup>:

1. աշխատատեղերի ստեղծման և կրճատման դինամիկան առանձնահատուկ բնույթ է ստացել հատկապես պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի և հատկապես տնտեսավարող սուբյեկտների սեփականության ձևերի ու կազմակերպահրավական միջոցների խիստ փոփոխության հետևանքով: Օրինակ, ուսումնասիրությանը նախորդած երկու տարում իրենց սեփականության ձևը փոխել են ձեռնարկությունների շուրջ 1/4 (24.6%), որի հետևանքով դրանց գրեթե կեսը (49%) իրականացրել է աշխատուժի զբաղվածության կրճատում, ընդհակառակը, 15%-ը՝ բարձրացում: Ընդ որում, առավելագույն կրճատում տեղի է ունեցել փակ բաժնետիրական ընկերություններում (ամբողջ կրճատումների 60%-ը), որը շուրջ երկու անգամ ավելի է, քան բաց բաժնետիրական ընկերություններում և դուստր ձեռնարկություններում իրականացված կրճատումները միասին վերցրած (համապատասխանաբար՝ 22% և 10%): Ընդհակառակը, այդ նույն ժամանակահատվածում անհատական ձեռնարկություններում նկատվել է աշխատուժի զբաղվածության ավելացում 60%-ով: Ասենք նաև, որ սեփականության ձևի բարեփոխում ունեցած ձեռնարկություններում անցկացված հարցումից պարզվեց, որ այդ նույն տարիներին աշխատուժի զբաղվածության կրճատման և ավելացման հարաբերությունը կազմել է 3.3 և 1, այսինքն՝ մոտավորապես 3.3 կրճատված աշխատատեղերի փոխարեն ստեղծվել է ընդհամենը 1 աշխատատեղ: Ուշագրավ է այն փաստը, որ թե կրճատումը և թե ավելացումը հիմնականում իրականացվել է տնտեսության մասնավոր հատվածում:

2. Ձեռնարկություններում զբաղվածությունը հիմնականում չի կարելի համարել լրիվ և արդյունավետ, քանզի դրանց 46.1%-ը օգտագործել է իր արտադրական հզորությունների միայն 25%-ը, 21.4%-ը՝ 25-50%-ը, 20.2%-ը՝ 50-75%-ը և միայն 12.3%-ն է աշխատել գրեթե լրիվ հզորությամբ, այսինքն՝ օգտագործել է իր հզորությունների 75 և ավելի տոկոսը: Որպես կանոն, ոչ լրիվ հզորությամբ աշխատում են մասնավորեցված հատվածի խոշոր և միջին ձեռնարկությունները: Հետևանքը եղել է այն, որ արտադրական հզորությունների օգտագործման միջին մակարդակը կազմել է 35-36%, և մեր հետազոտած անձնակազմի 3/4-ից ավելին զբաղված է եղել այնպիսի ձեռնարկություններում, որոնք օգտագործում են իրենց հզորությունների մինչև 50%-ը:

3. Հայաստանում մեծ տարածում ունի արտադրության կրճատման առանց անձնակազմի հանապատասխան կրճատման: Հարցման պահին<sup>5</sup> հարցման ենթարկված ամբողջ անձնակազմի (226321 մարդ) 7.4%-ը (կամ մոտ 17000 մարդ) զբաղված է եղել ժամանակավորապես անգործունակ ձեռնարկություններում, իսկ 25.7%-ը (կամ ավելի քան 60 000 մարդ), գտնվելով վարչական արձակուրդում, ժամանակավորապես չի աշխատել: Փաստորեն, «զբաղվածների» 33%-ը լինելով փաստացի գործազուրկներ՝ «դե-յուրե» համարվում են արդյունաբերաարտադրական անձնակազմի մեջ:

Դա ինքնին խոսում է այն մասին, որ գործ ունենք հսկայական չափերի հասնող «քողարկված գործազրկության» հետ: Միկրոմակարդակով աշխատու-

<sup>4</sup> Օգտագործվել են ՀՀ սեփականաշնորհման, արդյունաբերության և առևտրի, գյուղատնտեսության նախարարությունների և աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության կողմից տրամադրված տվյալները:

<sup>5</sup> Չնայած հարցումն անցկացվել է 1999 թ.՝ քողարկված գործազրկության հիմնախնդիրն ըստ էության մնում է չլուծված:

ծի ավելցուկի հիմնախնդիրը այսօր խիստ կենսական է և հրատապ լուծման կարիք ունի: Բավական է ասել, որ յուրաքանչյուր չորրորդ ընկերություն ունի աշխատուժի ավելցուկ: Ընդ որում, նրանց հիմնական մասը (81%) կենտրոնացված է Հայաստանի խոշոր և միջին ձեռնարկություններում, որպիսիք համարվում են 101 և ավելի թվով աշխատատեղեր ունեցողները (տե՛ս աղյուսակ 1)<sup>6</sup>:

**Աղյուսակ 1**

**Աշխատուժի ավելցուկի բաշխումն ըստ ձեռնարկությունների չափերի (%)**

	1-9 աշխատող ունեցողներ	10-100 աշխատող ունեցողներ	101-500 աշխատող ունեցողներ	501 և ավելի աշխատող ունեցողներ	Ընդամենը
հարկադրված վարչական արձակուրդում գտնվողների տեսակարար կշիռ	1.0	18.0	40.9	40.1	100
ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով աշխատողների տեսակարար կշիռ	0.6	4.2	28.5	66.7	100
հաստիքների կրճատման պատճառով ազատվածների տեսակարար կշիռ	12.3	53.5	34.2	0	100

Չկիրառվող աշխատուժի տեսակարար կշիռը բարձր է լինում մետալուրգիական, վերամշակող և արդյունաբերական (32.7%), շինարարական (16%), անշարժ գույքի տնօրինության հետ կապված գործունեության (23%) ոլորտներում (տե՛ս աղյուսակ 2)<sup>7</sup>:

**Աղյուսակ 2**

**Աշխատուժի ավելցուկի բաշխվածությունն ըստ տնտեսության հատվածների և ճյուղերի**

	Ջրաղվածների ընդհանուր թվում վարչական հարկադիր արձակուրդում գտնվողների տեսակարար կշիռը (տոկոսներով)		
	Ընդամենը	Պետական	Ոչ պետական
Լեռնա-մետալուրգիական և վերամշակող արդյունաբերություն	32.7	15.9	36.9
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	1.8	1.5	12.0
Ծինարարություն	16.0	11.7	18.2
Մեծածախ և մանրածախ առևտուր	5.3	2.7	10.3
Տրանսպորտ և կապ	4.1	3.8	8.8
Գործառնություններ անշարժ գույքի հետ	22.9	21.6	30.3

Հարկ է ավելացնել նաև, որ հետազոտության պահին չգործող ձեռնարկություններում (29.2%) զբաղված էր հետազոտվող ամբողջ աշխատուժի 7.4%-ը: Ընդամեն, հիշյալ ձեռնարկություններում զբաղվածների մեջ ամենաբարձր տոկոս են կազմում մայրաքաղաքի բնակիչները (27.7%), երկրորդ տեղում են Գեղարքունիքի մարզի բնակիչները (21%), իսկ գրեթե հավասար են Լոռու և Կոտայքի մարզերի բնակիչները (համապատասխանաբար՝ 13% և 12.5%):

<sup>6</sup> Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանում» զեկույցը, ԱՄԿ ԶԾ Հայաստանյան գրասենյակ, 1999 թ., էջ 29:

<sup>7</sup> Տե՛ս նշված զեկույցը, էջ 30:

Հետաքրքիր է, որ Գեղարքունիքում բոլոր աշխատողների մոտավորապես 35%-ը, որոնք զբաղված են ոչ գյուղատնտեսական ձեռնարկություններում, փաստորեն հանդիսանում են չգործող օբյեկտների անձնակազմ: Սյունիքում, Արագածոտնում և Արմավիրում այդպիսիք հանդիսանում են զբաղվածների 15-17%-ը (տե՛ս աղյուսակ 3)<sup>8</sup>:

Աղյուսակ 3

Չգործող ձեռնարկությունների և զբաղվածների բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի

	Չգործող ձեռնարկությունների տեսակարար կշիռը դրանց ընդհանուր թվում	Չգործող ձեռնարկություններում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվում	Չգործող ձեռնարկություններում զբաղվածների տեսակարար կշիռը դրանցում զբաղվածների ընդհանուր թվում
Երևան	35.8	4.0	27.7
Արագածոտն	40.0	15.9	2.9
Արարատ	25.4	2.6	1.1
Արմավիր	24.0	15.4	8.2
Գեղարքունիք	23.9	34.9	21.0
Լոռի	17.9	7.6	13.0
Կոտայք	24.6	9.6	12.5
Ծիրակ	10.5	3.8	3.3
Սյունիք	30.8	16.6	9.5
Վայոց ձոր	11.1	0	0.0
Տավուշ	32.4	2.2	0.8
Ընդամենը	29.2	7.4	100

Ձեռնարկություններում աշխատուժի հետազոտության շնորհիվ հնարավոր դարձավ պարզել Հայաստանում թաքնված զբաղվածության մակարդակը և վիճակագրորեն գնահատել այդ երևույթի մասշտաբները (տե՛ս աղյուսակ 4)<sup>9</sup>:

Աղյուսակ 4

Հետազոտված ձեռնարկություններում քողարկված գործազրկության մակարդակի հաշվարկը

	Ընդամենը զբաղված, մարդ	Ջրաղվածների ամբողջ թվի նկատմամբ %-ներով արտահայտված
զբաղվածներ	226321	100
հնարավոր կրճատումներ	14334	+6.3
աշխատատեղերի հնարավոր ավելացումներ	6439	-2.8
մասնակի վարձատրությանը հարկադիր արձակուրդում գտնվողներ	11908	+5.2
անվճար հարկադիր արձակուրդում գտնվողներ	48362	+21.4
ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով աշխատողներ	7832	+3.5
թաքնված գործազուրկներ	75997	33.6

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, քողարկված գործազրկությունը կազմում է պաշտոնապես զբաղված աշխատողների 33.6%-ը, որը մոտավորապես համընկնում է ոչ գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական կարողությունների օգտագործման միջին ցուցանիշին՝ 35.7%:

Եթե դրան ավելացնենք աշխատատեղերի և օգտագործվող աշխատուժի անհամապատասխանության փաստը, աշխատավարձերի անբավարար մա-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>9</sup> ԱՄԿ «Ձեռնարկությունների տնտեսական վերակառուցումը և տնտեսական վերափոխումը Հայաստանի արդյունաբերությունում», ԺՆԱ, 1996 թ., էջ 24-33: Օգտագործել ենք նշված աղբյուրի մեթոդաբանությունը, իսկ թվերը փոփոխվել են հետազոտության շարունակման հետևանքով:

կարողակը (որը ցածր է մեկ մարդու սպառողական նվազագույն բյուջեից), ապա, ըստ ԱՄԿ-ի հաճճնարարակաների, քողարկված գործազրկությունը ավելի մեծ չափերի է հասնում: Մասնավորապես տնային տնտեսություններում զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբաղվածների 34.5%-ը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ, իսկ զբաղվածների 60.7%-ը աշխատավարձի ցածր մակարդակի պատճառով ակտիվորեն նոր աշխատանք է որոնում<sup>10</sup>:

Այսպիսով, քողարկված գործազրկության պահպանման երևույթը բավականին տարածում ունի հանրապետությունում և, մեր կարծիքով, կարելի է բացատրել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ բնույթի գործոնների առկայությամբ.

1. ձեռնարկությունների վարչակազմի (ղեկավարության) համար արդեն պատրաստի և երկար աշխատանքային փորձ ունեցող անձնակազմի պահպանման տնտեսական շահավետությունը: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, վարչական հարկադիր արձակուրդում գտնվող աշխատողների միայն 20%-ն է ստանում մասնակի փոխհատուցում, որը, համաձայն գործող օրենսդրության, հավասար էր նվազագույն ամսական աշխատավարձի 2/3-ին:

2. Աշխատողները նախընտրում են լինել վարչական արձակուրդում, քան ազատված: Ինչպես ցույց է տվել Երևանում մասնավորեցված որոշ ձեռնարկությունների աշխատողներին ուղղված հարցումը<sup>11</sup>, հարցման ենթարկվածների գերակշռող մեծամասնությունը (միջինը՝ 74%-ը, այդ թվում՝ 77% բանվորներ, 75% ծառայողներ, 65% միջին օղակի մասնագետներ, 69% ինժեներատեխնիկական և ղեկավար անձնակազմ) նախընտրում է ունենալ ցածր վարձատրությամբ, նույնիսկ առանց վարձատրության, բայց մշտական աշխատատեղ: Այդ պատճառով էլ նրանք մնում են իրենց բազմամյա աշխատատեղերում:

Թե մեկ և թե մյուս դեպքում և՛ վարչակազմը, և՛ աշխատողները հույսը դնում են ձեռնարկությունների արտադրական ներուժի վերականգնման, հետևաբար արտադրության ծավալի մեծացման վրա:

3. Մտածողության հոգեբանական առանձնահատկություններով՝ ժառանգված սոցիալիզմի մարքսիստական աշխարհայացքը («Մարդը մարդուն եղբայր է». խղճի հասկացություն և այլն), որը գլխավորապես հատուկ է «ոչ սեփականատերերին»: Այսպես, արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով ավելցուկային աշխատուժի կրճատման միանշանակ կողմնակից էին հարցվածների 10%-ը, իսկ դեմ՝ 52%-ը: Ընդ որում, վերջիններս 13.6%-ը կազմում էին ինժեներատեխնիկական աշխատողներ և վարչակազմի անդամներ:

4. Իրավական դաշտի անկատարությունը, որը ձեռնարկատերերի համար ծառայում է որպես «սողանք»: Վնասով աշխատող անվճարունակ ձեռնարկությունների երկարաժամկետ պահպանման համար մինչև օրս գործող օրենսդրական դաշտում փաստորեն կան բոլոր բավարար և անհրաժեշտ պայմանները: Ձեռնարկությունների լուծարման գործող ընթացակարգը տևում է բավականին երկար (ավելի քան 6 ամիս) և կառաված է որոշակի վերադիր ծախսերի հետ (այդ թվում նաև աշխատանքից ազատված աշխատողների արձակուրդային նպաստների մոծումները): Հարկային օրենսդրությունը ճանաչում է իրենց ժամանակավորապես անգործունակ հաշտարարած ձեռնարկությունների «գրոշակյան հաշվեկշիռի» փաստը: Աշխատանքային օրենսդրությունը հնացած է (դեռևս գործում է 60-ական թվականների խորհրդային աշխատանքային օրենսգիրքը) և չի համապատասխանում տնտեսական նոր պայմաններին:

<sup>10</sup> ՀՀ վիճակագրության նախարարության Համաաշխարհային քանակ. 3600 տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքներից. Եր., 1999 թ.:

<sup>11</sup> «Մասնավորեցված ընկերությունների տնտեսական փոփոխության առանձնահատկությունները ՀՀ-ում», Կառավարման և տնտեսական քաղաքականությունների ինստիտուտ. Եր., 1999 թ., էջ 24:

5. Զանգվածային կրճատումների օրենսդրական խոչընդոտները: Բանն այն է, որ մասնավորեցման մասին օրենքի անբաժան մասը կազմող մասնավորեցման ծրագրային փաստաթղթերը մասնավորեցվող օբյեկտների ցուցակում գտնվող ձեռնարկության ղեկավարությանը նախամասնավորեցման փուլում արգելում են անցկացնել խոշոր կառուցվածքային փոփոխություններ (այդ թվում՝ զանգվածային կրճատումներ): Պաշտոնական նման դիրքորոշումն, անշուշտ, ունի դրական միտում՝ սահմանափակել մասնավորեցման գործընթացին աշխատանքային կոլեկտիվի «ոչ պիտանի» անդամներին մասնակցելու իրավունքից զրկելու ձեռնարկությունների ղեկավարների հնարավորությունը:

6. Կառավարման պետական կառույցների կողմից տնօրեններին տրված գաղտնի հրամանները: Բնական է, որ արտադրության խորը անկման պայմաններում, հատկապես ռազմաարդյունաբերական համալիրում, որտեղ կենտրոնացված էր տնտեսության մեջ զբաղվածների մինչև 40%-ը, զբաղվածության կրճատման տնտեսական սպասումներն ավելի մեծ էին, քան փաստացի կրճատումը: Այդպես ստացվեց, որովհետև ժամանակին ձեռնարկությունների տնօրեններին կառավարությունը գաղտնի հրահանգել էր չդիմել աշխատանքից զանգվածային ազատ արձակումների՝ հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված տնտեսական, քաղաքական և սոցիալական ծանր վիճակը:

Վերը նշված հանգամանքները միասին վերցրած կանխորոշել են տնտեսության տարբեր ոլորտներում մասնակի զբաղվածների մի ստվար զանգվածի առկայությունը, որի հակադիր երեսը, անշուշտ, քողարկված գործազրկությունն է:

Եզրակացությունը պարզ է. քանի դեռ արդյունաբերական ձեռնարկությունները կախված չեն աշխատուժի արժեքից, այնքան ժամանակ կդիմեն կադրային կոշտ քաղաքականության, որին նպաստող հիմնական գործոնը կադրերի պահպանման պրակտիկան է, իսկ դա ձեռնարկություններին ստիպում է աշխատուժը դիտել որպես հաստատագրված արժեք: Հետևաբար, «բյուջետային կոշտ սահմանափակումների» անցնելու դեպքում անխուսափելիորեն կկրճատվեն հաստիքները, իսկ դրա հետևանքով կնվազի թաքնված գործազրկությունը, կբարձրանա գործազրկության պաշտոնական մակարդակը: Դա, անշուշտ, անխուսափելի երևույթ է, որից ազատվելու լավագույն միջոցը ոչ թե դրա քողարկումն է, այլ իրական պատկերի բացահայտումը:

**М. Р. ЕГИАЗАРЯН- Скрытая безработица как явление переходной экономики.** - За годы реформ рынок труда в Армении претерпел много серьезных изменений и преобразований. Одним из негативных явлений, свойственных только странам с переходной экономикой, является скрытая безработица, которая в Армении составляет около 33.6 % (табл. 4). Под скрытой безработицей подразумевается такое явление, когда работники, числящиеся на предприятии, на самом деле находятся в вынужденном отпуске (без оплаты или с частичной оплатой) или работают неполную неделю или неполный день. Скрытая безработица - следствие того, что за годы преобразований многие предприятия оказались в тяжелых условиях и вынуждены были сократить объем производства или вообще временно закрыться, а нежелание руководства лишиться квалифицированных работников и надежда, что предприятие вновь восстановится, заставляли не сокращать кадры, а отправлять людей в отпуск или прибегать к другим мерам, ведущим к развитию скрытой безработицы.

Скрытая безработица преимущественно присуща государственным предприятиям, ибо по причине "мягких бюджетных ограничений" они ведут "жесткую" кадровую политику и рассматривают кадры как определенную неизменную величину. В дальнейшем, в силу неизбежности "жестких бюджетных ограничений", предприятия перейдут на "гибкую" кадровую политику и станут перед необходимостью сокращений, что приведет к снижению уровня скрытой и увеличит уровень официальной безработицы.